Այսպիսով, Շարուր—Դարալագեազ—Նախիջևանի շրջանները յայտարարում էին վիճելի, որով դնդ. Հասկելը իրացնում էր ազրբէջանեան տեսակէտը:

Աւելին դեռ. պայմանագրի 9րդ կէտը ասում էր. «Հայաստանի կառավարութիւնը պիտի գործադրէ իր ամբողջ ազդեցութիւնը հանգստացնելու համար հայ ազգաբնակութիւնը չէզոք շրջանում և Զանգեզուրում»: 12րդ կէտով «Ազրբէջանի կառավարութիւնը համաձայնւում է ամէն կերպ դիւրացնել Ամերիկեան Նպաստամատոյցի պարենաւորման և անունդ տալու գործը Շուշիի և Զանգեզուրի շրջանների ազգաբնակութեան»: 15րդ կէտով «Բագու—Ջուլֆա չինւող երկաթուղագիծը պիտի լինի բացառապէս Ազրբէջանի կառավարութեան իշխանութեան տակ և ոչ ոք չպիտի խառնւի նրա կառուցման գործում»: 16րդ կէտ. «Հայաստանի և չէզոք շրջանի սահմանը պիտի լինի այն տեղը, որը կոչւում է Գայլի Դրունք»:

Այսպիսով, «Հայաստանի Դեմոկրատական Կոմիտասը» Ղարաբաղ—Զանգեզուրն էլ տալիս էր Ազրբէջանին: Ու հասկանալի է այն զարմանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երևանում, երբ ստացւեց Հասկելի կարգադրութիւնը՝ «առանց դանդաղելու ստորագրել և յետ ուղարկել» պայմանագիրը: Զհամութիւն ու թշնամանք փնտռելը Հասկելի քայլի մէջ անտեղի էր, ի հարկէ, այնքան վրան բաց էր կատարւած խաղը: Մարդը պարզապէս գոհ էր իր անգիտութեան ու դիւրահաւանութեան և Բագւում լարւած մեքենայութիւններին: Նրան ամէն կողմից ներկայանում էին թուրք պատգամաւորութիւնները՝ դանդատով ու բողոքով Հայաստանի իշխանութեան դէմ. Ազրբէջանի կառավարութիւնը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թւեր, և խեղճ մարդը չգիտէր՝ ո՞ւմ հաւատալ, ի՞նչ անել:

Այսպէս, սեպտ. 9-ին Հասկելին ներկայացան «Հարաւ-Արևմտեան Ազրբէջանի» ներկայացուցիչները և յանձնեցին 10 կէտից բաղկացած մի յուշագիր, որի մէջ գրում էին.

«Նկատի ունենալով, որ ամէն ազգ իրաւունք ունի անկախութեան և իր ձեռքն առնելու իր իրաւունքները ու ճակատագիրը, Սուրմալուի, Վեդիբասարի, Միլիստանի, Շարուրի, Նախիջևանի և Օրդուբաթի շրջաններն իրենց համարում են անբաժանելի մասն Ազրբէջանի»: Այդ շրջանների ժողովուրդը «պահանջում է թէ Ազրբէջանի կառավարութիւնից և թէ Անդրկովկասի դեմոկրատական կոմիտասրից, որ այլևս նրան չենթարկեն Հայաստանի հպատակ լինելու դրութեան», այլապէս՝ նա «կը նախապատրաստ դէնքը ձեռքին պատուով մեռնել, քան անպատիւ կերպով ոչնչանալ դաշնակցական աւազակների ձեռքից»: Յուշագիրը համաձայնւում էր, որ, մինչև Փարիզի Վեհաժողովի վերջնական կարգադրութիւնը, հաստատւի ժամանակաւոր մի դրութիւն դեմոկրատական կոմիտասրի հսկողութեան տակ, պայմանով, որ վերոյիշեալ շրջանները չանջատւեն Ազրբէջանից: Միաժամանակ, յուշագրի հեղինակները պահանջում էին կազմել «մի խառն քննիչ մարմին բոլոր դաշնակիցների ներկայացուցիչներից» քննելու համար «հայ աւազակ դաշնակցականների կատարած բռնութիւնները Երևանի վիլայէթի ազրբէջանցիների դէմ»:*)

*) Բագուի «Ազրբէջան», 1919թ. № 176.